ԿԱՄՔԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ Կ. Մ.

Մարդկային կամքի և իրավունքի՝ որպես տեսականորեն շոշափելի կատեգորիաների պատմականորեն հաստատված ներքին կապակցությունը հնարավոր չէ հանգամանորեն քննարկել մեկ հոդվածի սահմաններում՝ նկատի ունենալով հատկապես այն, որ իրավունք կատեգորիայի բուն սոցիալական իմաստի շուրջը ծագող դժվարությունները, և առավել ևս, թյուրիմացությունները, որոնք կամա թե ակամա անխուսափելիությամբ տեղ են գտել և՛ իրավունքի ընդհանուր տեսության, և՛ «իրավունքի փիլիսոփայության» մեջ, պայմանավորված են մարդկային կամքի հետ իրավունքի հարաբերության մերձությամբ: Ի պատիվ իրավունքի տեսաբանների՝ նրանք չեն ընկրկում այն փաստից, որ առ այսօր ոչ մի կերպ չի հաջողվել գտնել իրավունքի *ընդհանուր սոցիալական իմաստը* բացահայտելու տրամաբանությունը: Ավելին. առաջին հերթին հենց իրավունքի տեսաբանները կռահեցին, թեկուզ և ոչ բավարար հստակությամբ, որ իրավունքի կատեգորիայի այս «անորսալիությունը» գլխավորապես բխում է հասարակության կյանքի հիմնային գործընթացներն ընդգրկող՝ հենց իրավունքի ձևի ամենաթափանցելիությունից: Եվ իսկապես, ինչո՞ւմն է իրավունքի այդ ձևի «խորիմաստությունը»:

Մեզ համար, հասկանալի պատճառներով, շատ ավելի հեշտ կլիներ, հետևելով Հեգելի իմաստուն խորհրդին, անմիջապես անցնել բուն առարկային և ելնել հենց իրենից՝ «իրավունքի կատեգորիայից», ինչպես դա պահանջում է ամեն մի որոշակի սոցիալական ձևի *սեփական տրամաբանությունը*՝ դրա իսկ գոյաբանության ոգով: Սակայն… գաղտնիք չէ, որ Խորհրդային Միության կործանման ողբերգական իրադարձությունների պայմաններում առաջացած ընդհանուր գաղափարական քաոսը՝ սանձազերծված այդ ժամանակի նորաթուխ «ժողովրդավարական» իշխանությունների կողմից, իր հետ բերեց սոցիալական գիտության արմատական գաղափարների, այդ թվում նաև՝ իրավունքի բուն պատմական իմաստը նպատակային աղավաղումների ենթարկող *քաղաքական ռեակցիայի* մի ամբողջ հորձանք: Խոսելով այդ մասին՝ 2004 թվականին հրատարակված «*Տնտեսական ուսմունքների պատմություն*» դասագրքի հեղինակները նշում էին, որ անցյալ դարի 90-ական թվականներին Ռուսաստանում իշխող քաղաքական կամայականությունների պայմաններում «հասարակության քրեականացումը, գիտության, մշակույթի և կրթության հետադիմությունը այլ կերպ անվանել չի կարելի, եթե ոչ հենց տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և կադրային «աղետ»[1]:

Մի ամբողջ պատմական դարաշրջանի ընթացքում «կրեմլյան մտածողների» հովանավորության տակ քաղաքական ցինիզմի աստիճանի հասած պաշտոնական

---

[1] *История экономических учений, М., 2004, с. 7.*

գաղափարախոսությունն անում էր այն, ինչը երբեք որևէ հասարակության մեջ չէր եղել: Սթափ գիտակցելով, որ խորհրդային հասարակության «*տնտեսական կազմախոսությունն*» իր բուն էությամբ շարունակում է մնալ «սոցիալիզմից» լուսային տարվա հեռավորության վրա կանգնած *պետական մոնոպոլիստական կապիտալիզմի նմանակը* հիշեցնող կարգի շրջանակներում, խորհրդային պաշտոնական գաղափարախոսությունը թաքցրած սարկազմով պնդում էր, որ «մենք իրական սոցիալիզմի երկիր ենք»: Սովորաբար ֆարսը ֆարս է ծնում: Իսկ այս անգամ այն ծնեց համաժողովրդական ցասում: Իր մարդկային կյանքի հիմքերի սթափ զգացողության վրա խայտառակ արհամարհանքով թքոտած այս գաղափարախոսական ցինիզմը խորհրդային ժողովուրդը չէր կարող անվերջորեն հանդուրժել, և նա պետք է մղվեր դեպի այն, ինչին որ նման պահերին մղվում է ամեն մի նորմալ ժողովուրդ: *Նա բնազդային ցասման ալիքների վրա մղվեց դեպի խորհրդային կարգը տապալելու իր կամքը:*

Թվում էր, թե խորհրդային ժողովրդի ապրած սոցիալ-տնտեսական և քաղաքական ցնցումներից հետո միանգամայն նոր հայացքով մարդիկ պետք է նայեն սոցիալական գիտության մեջ առանցքային նշանակությամբ մի այնպիսի կատեգորիայի վրա, ինչպիսին *իրավունքն* է: Ավաղ, ըստ էության ոչինչ չփոխվեց իրավունքի փիլիսոփայության մեջ: Իրավունքի *փիլիսոփայության մեջ* Հեգելի դարաշրջանից հետո պահպանված դոգման այն մասին, որ իրավունքը պատմական ասպարեզ բերող սոցիալական ուժը հանդիսանում է մարդկային ազատությանը հասնելու կամքը, զարմանալիորեն անսասան է մնում նաև այսօրվա «իրավունքի փիլիսոփայության» մեջ, և այն էլ պաշտոնապես հաստատված ձևով:

Կամքի և իրավունքի միջև պատմականորեն հաստատված հարաբերությունը երբեք և ոչ մի դարաշրջանում առաջնություն չի տվել ազատության համար «մաքառող» կամքին՝ պատմությանը շատ վաղուց արդեն հայտնի *սոցիալական շահերի* գերիշխող օրենքով: Դա հասկանում էր արդեն Արիստոտելը, որի համար ստրկական աշխատանքն էր իր ժամանակի հասարակության քաղաքակիրթ կարգը պահպանող հիմքը: Հեգելը չգիտեր իր ժամանակի *նորածին* դասական քաղաքատնտեսության նվաճումները բուրժուական հասարակության տնտեսական հիմքերի բացատրության մեջ, և այնուամենայնիվ, դրանով հանդերձ, կռահել էր, որ «Միայն սեփականության մեջ է դեմքը հանդես գալիս որպես բանականություն»[2]: Որովհետև, Հեգելի համոզմամբ, մարդկային անհատի մեջ ամփոփված «մերկ սուբյեկտիվությունը»[3] միայն արտաքին իրերին *տիրելու սեփականատիրական հարաբերության միջոցով է հասնում իր ինքնահաստատմանը* ՝որպես անձնավորություն, և դրա մեջ է Հեգելը սթափ հայացքով հայտնաբերում «աբստրակտ իրավունքին» կյանք տվող անորսալի սուբստանցը, այն սուբստանցը, որն ինքնըստինքյան վերցրած, ամենևին էլ «ազատություն» չէր, այլ ազատությունը

---

[2] **Гегель,** *Философия права, М., 1990, с. 101.*

[3] Նույն տեղում:

իրականություն դարձնող հիմք: Հետևաբար, ճիշտ այն չափով, ինչ չափով մարդկային անհատն է ի վիճակի դառնում տնօրինել իրերը իր սեփական հայեցողությամբ, այդ չափով էլ նրան տրվում է այդ երանելի «ազատությունը»:

Կամքի ամբողջ իմաստը, որպես որոշակի սոցիալական նպատակներին հասնելու համար պահանջվող վճռականության մի ձև, հենց իրավունքն է, եթե սրա տակ հասկանանք այն, ինչը փորձում էին ապացուցել փիլիսոփայական մտքի հանճարները՝ սկսած Պլատոնից և Արիստոտելից մինչև Կանտը և Հեգելը, և ինչու չէ, նաև «Կապիտալի» հեղինակ Կարլ Մարքսը, այն է՝ մարդկային կյանքի սոցիալական հիմքերին կարգավորվածություն տվող ձևը: Այդ շարքում Հեգելն առաջին մարդն էր, որը «իրավունքի գաղափարը և իրավունքի հասկացությունը»՝ դրանց ներքին պայմանավորվածության մեջ բացահայտելու մաքառումներով, ընդհուպ մոտեցավ «իրավունքի բուն գոյության օբյեկտիվ ձևին և հանճարեղորեն կռահեց, որ իրավունքը մարդկանց սուբյեկտիվության նկատմամբ բացարձակապես անտարբեր ձևով գործող մի հարաբերություն է, որի շնորհիվ անհատներն իրենք էլ չգիտակցելով այդ, վերածվում են որոշակի սոցիալական դեմքերի՝ անձնավորությունների»[4]: Իսկ այստեղից նա ավելի հեռուն գնաց: Իրավունքի գաղափարը ամեն ինչի ելակետը համարող Հեգելը, որն իր այս հարցադրումով բացահայտորեն ի հայտ էր բերում օբյեկտիվ իդեալիզմի իր հայեցակետը իրավունքի ծագման պատճառների բացատրության մեջ, որևէ չափով լրջորեն չկաշկանդվեց այն մտքից, որ, այնուամենայնիվ, հարկավոր է խելամտորեն հաշվի նստել իրավունքի պատմական ձևերի հերթափոխության մեջ էապես լուրջ դեր ունեցող մարդկային շահերի հետ՝ պայմանավորված դարակազմիկ նշանակություն ունեցող սեփականատիրության ձևերի հետ, դրանցից հատկապես առանձնացնելով տիրույթի, մասնավոր սեփականության և հենց նոր դարաշրջանի «ուղնուծուծը» կազմող «աբստրակտ մասնավոր սեփականության» կատեգորիաների տարերայնորեն հաստատված կարգը: Նրան չդավաճանեց զարգացած պատմական կանխազգացողությունը, երբ հենց այս կատեգորիաների օբյեկտիվ ընթացքի մեջ յուրովի հայտնագործեց «քաղաքացիական հասարակությունը նոր դարաշրջանի երեվույթ»[5] դարձրած օբյեկտիվ ուժերի «ինքնակամ» զարգացումը:

Ինքնըստինքյան էլ պարզ է, որ Հեգելի «Իրավունքի փիլիսոփայության» մեջ ձևակերպված ճշմարիտ գաղափարների նշանակությունը չի սահմանափակվում միայն նրա դարաշրջանով: Դա պետք է հասկանալ, եթե իսկապես մենք իրավունքին վերաբերող ինչ-որ բան ենք ուզում հասկանալ:

Վերջապես ժամանակն է, որպեսզի մենք հասկանանք «հասարակական սեփականությանը» վերաբերող գլխավոր ճշմարտությունը, այն, որ ո՛չ *Լենինը, ո՛չ 20-ական թվականների բոլշևիզմը* և դրանից հետո Կրեմլ մտած մարդիկ, այդ թվում նաև Մ. Գորբաչովը, երբեք չեն փորձել բացել այդ սեփականության բուն տնտե-

[4] Նույն տեղում, էջ 98:
[5] Նույն տեղում, էջ 228:

սական իմաստը: Խորհրդային կարգի հիմքում ընկած հասարակական-պետական սեփականությունը իր ամբողջ գոյության ընթացքում մնաց, բառիս իսկական իմաստով, մի յուրօրինակ *պատմական հիերոգլիֆ*: Իսկ այն, ինչ ասվում էր այդ սեփականության մասին, բացի սոփեստությունից, որևէ կերպ չէր կարող ստանալ *որոշակի քաղաքատնտեսական իմաստ:*

Խորհրդային ժողովուրդների մեծագույն պատմական նվաճումը հանդիսացող հասարակական-պետական սեփականությունը, որի հետ իր մարդկային կյանքի կարևոր բոլոր հարաբերություններով միահյուսված էր հենց ինքը՝ խորհրդային ժողովուրդը, որպես այդ սեփականությունը գործողության մեջ դնող մի կենդանի արտադրողական ուժ, իրականում չէր ներկայացնում հենց այդ ժողովրդին, և իրավունքի կատեգորիայի տեսակետից օտարված էր հենց ինքն իրենից: Որովհետև, բացի իր մարդկային աշխատուժից, ժողովուրդը ոչինչ չէր տնօրինում հասարակական արտադրության մեջ, իրավունք չուներ որևէ ձևով արտահայտելու իր տնտեսական շահը, շահագրգռության նպատակահարմար ձևը և իր քաղաքացիական վերաբերմունքը աշխատավարձի մասին, և ուրեմն ինքը, որպես կենդանի աշխատուժի կրող, *հանդիսանում էր պետության կողմից տնօրինության ենթակա օբյեկտ: Եվ ոչ ավելին:* Դրա փոխարեն, տնտեսական հարկադրանքի հարաբերությամբ արտադրության պայմանների հետ կապված խորհրդային ժողովուրդը իր այս ենթակայությամբ, «թույլ էր տալիս» պետությանը գործելու կամայականության այն սահմաններում, որոնցում կարելի էր պահպանել միայն *աշխատուժի վերարտադրության նվազագույն սահմանը՝ աշխատավորին, որպես սոսկ միայն աշխատավոր* պահպանելու համար: Հետևաբար, «հասարակական-պետական սեփականության»՝ խորհրդային իշխանության կողմից իրագործված ձևը, իր բուն էությամբ, այնչափով միայն կարող է կոչվել «սոցիալիստական», որչափով հնարավոր էր բռնազբոսիկ եղանակով աղավաղման ենթարկել *ապրանքային արտադրության օրենքները* «կապիտալիզմի մնացուկների» որակում: Խորհրդային տնտեսական կարգը, իսկապես, մի անհասկանալի սոցիալական խառնածին էր:

Այդպիսի բարդույթներով սոցիալական կարգի հիմքում ընկած հասարակական-պետական սեփականությունը, ինչպիսի թաքնված տնտեսական իմաստ էլ որ ունենար, որևէ կերպ չէր կարող դառնալ ոչնչացման ենթակա օբյեկտ այն ժողովրդի կամքի համար, որը դեռ ինքն էլ չգիտեր, թե ինչ ուղղակի հետևանքներ են սպասում իրեն այդ սեփականությունը ոչնչացվելու պարագայում, մանավանդ որ նա ինքը, որպես սոսկ միայն իր աշխատանքով ապրող մի հանրություն, իր տրամադրության տակ ոչինչ չուներ որպես իր գոյության երաշխիք՝ իր «վաղվա օրը» որևէ ձևով պատկերացնելու համար:

Կամքն իսկապես նրա մեջ պարունակվող հզոր հոգևոր մղումի ուժով ի վիճակի է դարաշրջանների հերթափոխության սահմանագծում վիթխարի դեր խաղալ մարդկային կյանքում, դառնալ զանգվածային սոցիալական շահերի՝ առաջադիմության վեկտորով շարժող մի յուրօրինակ լծակ,

համախմբել առաջադիմական քաղաքական և ազգային կուսակցություններին՝ մեկ ընդհանուր ազգային-գաղափարն իրագործելու պայքարում, և այսպիսով, օբյեկտիվորեն դառնալ այն, ինչ իմաստով որ «կամքի» մասին խոսում էր հանճարեղ Հեգելը, այսինքն՝ «պատմական անհրաժեշտության» գիտակցված ձև: Բայց այդպիսի կամքը, որպես լայնահուն պատմական առաքելության գիտակցված ձև, ասպարեզ է գալիս այնտեղ և այն ժամանակ միայն, երբ հասունանում է մարդկային կյանքի սոցիալական հիմքերը կարգավորող իրավունքի *տիրապետող ձևը* փոխելու բուն հիմնահարցը: Ուրեմն, մարդկային կամքը, ինքնըստինքյան վերցրրած, ոչ մի ռացիոնալ սոցիալական բովանդակություն չունի, և հետևաբար, երբ 1990-ական թվականների սկզբին մարդիկ հանդես էին գալիս «ժողովրդի կամքի» անունից, նրանք նախապես պետք է հասկանային, որ «խորհրդային կարգը» տապալելու գաղափարը որքան էլ որ ընդհանուր ոգևորություն առաջացնող գաղափար լիներ, այնուամենայնիվ, պետք է ելներ այդ կարգի հիմքում ընկած, այսպես կոչված, «հասարակական-պետական սեփականության» բուն էության գիտակցումից:

ПРАВО И ВОЛЯ В ИСТОРИЧЕСКОМ ПРОЦЕССЕ

АВЕТИСЯН К. М.

Резюме

Исследование диалектического взаимоотношения права и “воли” в историческом процессе приводит нас к следующим выводам: 1) право как форма регулирования социальных отношений людей функционирует в направлении развития именно тех форм собственности, которые, оправдывая себя экономически, тем самым оправдывают себя также исторически. Право неотделимо от формы собственности, функцией устойчивости и мерилом исторической зрелости которой оно является.

Так называемая “свободная воля” есть лишь иллюзорное представление о воле; “воля” становится субъективным фактором социального прогресса лишь в том случае, когда она, выражая господствующие интересы общества, отражает передовые социально – политические движения эпохи. Воля не может стать выше самого права.